# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ւ Ղ Ե Ր Ձ

«21» հունիսի 2024 թվականի

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի բուժաշխատողներ, առողջապահական համակարգի նվիրյալներ
Սիրով շնորհավորում եմ ձեզ՝ բուժաշխատողի մասնագիտական տոնի առթիվ:
Բժիշկը միայն մասնագիտություն չէ. կոչում, առաքելություն, պատիվ է: Այս օրը լավագույն առիթներից է մեր երախտիքի խոսքը հղելու ձեզ՝ ևս մեկ անգամ գնահատելով բուժաշխատողի կարևոր դերն ու առաքելությունը հասարակության կյանքում:

Պատասխանատվության բարձր զգացումով, մասնագիտական բարձր որակներով օժտված բուժաշխատողների ամենօրյա բարեխիղճ աշխատանքը կարևոր ներդրում է մեր բնակչության առողջության պահպանման գործում:

Թանկագին բուժաշխատողներ, մաղթում եմ ձեզ պնսահման առողջություն և հաջողություն, ուժ ու կորով, ամուր կամք և համբերություն այն դժվարին առաքելության մեջ, որը կատարում եք բարձր պատվով և անօրինակ պատասխանատվությամբ:

Լավագույնը՝ ձեզ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**